

22557

ՀԱՅԵԼԵՐ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԲԱՆԴԱՌԻ
ԱԺԿԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

—

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ԵՎՐԵՎԱՆ, 1930.

331

Հ - 94

15 JAN 2010

15 JUN 2007

15.07.2013

Գ. ՅՈՒԴ Ա. ՏԵՍ Ե Ս Ո Ւ Կ Ո Ւ - Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Կ Ո Ւ
Թ Ա Ն Վ Ա Ր Ե Ր Բ Ա Ր Հ Գ Ր Ո Ւ Տ Ո Ւ Տ Ե Ր Ե Ր

331


7-94

Ար

Դ. ՇՎԵՅՉԵՐ

**ՍԵԶՈՆԱՅԻՆ ԲՈՆՎՈՐԻ
ԱՃԵԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

Պետական հրատակչություն Ցերեվան 1930



15624 - 52

22557

ՍԵԶՈՒԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՔԸ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈԴԵՔՍԻ ԼՐԱՑՈՒՄՆ Ե

1926 թվականին հրատարակվեց սեղոնային աշխատանքի մասին որենքը (որենքի լիակատար առունն ե—ԽՍՀՄ կԳԿ և Ժողկոմիորհի 1926 թվականի հունիսի 4-ի վորոշումը «Սեղոնային աշխատանքների պարմանների մասին»):

Սեղոնային աշխատանքի որենքը Աշխատանքային կողեքսի լրացումն ե: Կողեքսի (որենսգրքի) բոլոր կանոնները չեն տարածվում սեղոնային բանվորների վրա: Որինակ՝ սեղոնային բանվորները չեն ոգտվում տարվա արձակուրդով, վորովինեաւ տարվա մեջ նրանք վեց ամսից ավելի չեն աշխատում: Սեղոնային բանվորներին արձակման դեպքում նպաստ ե տրվում մեկ շաբաթվա աշխատավարձի չափով, մինչդեռ մշտական բանվորներն ստանում են յերկու շաբաթվա աշխատավարձ: Այս բոլոր բացառությունները՝ աշխատանքային ընդհանուր որենքներից, ցուց են տրված սեղոնային աշխատանքի որենքի մեջ: Բացի այդ բացառություններից՝ Աշխատանքի կո-

Հ. № 1466

ԳՐԱՌԵՎԱՐ Ա 5892 (Բ):

Տիրաժ 3000

Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում
Պատկեր № 172

դեքսի մյուս կանոնները ամբողջովին տարածվում
են նաև սեղոնալին բանվորների վրա:

ԻՆՉՊԵՍ Ե ԿԻՐԱԾՎՈՒԽՄ ՍԵԶՈՆԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՔԸ

Սա շատ կարևոր հարց է: Բանն այն է, վոր
յերբեմն խորհանտեսություններում բանվորին սե-
ղոնալին բանվոր են համարում, յեթե նույնիսկ
նա մի քանի տարի շարունակ ծառայում է: Այդ-
պիսի բանվորներին խորհանտեսություններում
անվանում են «մշտական-սեղոնալին բանվոր-
ներ»: Մինչդեռ ըստ որենքի այդ բանվորները
սեղոնալին չեն համարվում: Վերցնենք՝ որինակ,
խորհանտեսության դարբնին: Նրան ել յերբեմն
համարում են սեղոնալին բանվոր: Իսկ այդ ճիշտ չէ:

Վորպեսզի զանագանենք, թե ում են ձշտորեն
և ում անճիշտ կերպով սեղոնալին բանվոր համա-
րում, պետք ե գիտենալ, թե ինչ ե ասված այդ
մասին որենքում:

Սեղոնալին աշխատանքի որենքին յենթակա յեն
այն բոլոր բանվորները, վորոնք զբաղված են սե-
ղոնալին անպիսի աշխատանքներում, վորոնց
տեղությունը տարվա մեջ վեց ամսից ավելի չեն:
Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատները
սեղոնալին աշխատանքների ցուցակ են հրատա-
րակում և միայն այն աշխատանքներն են համար-

վում սեղոնալին, վորոնք մտել են այդ ցուցակի
մեջ: Իսկ յեթե վորոնք աշխատանք այդ ցուցակ-
ներում նշանակված չեն, թեկուզ այդ աշխատան-
քը սեղոնալին ել անվանեն, սեղոնալին աշխա-
տանքի որենքը չպետք է կիրառվի նրանց վե-
րաբերմանը, ովքեր զբաղված են այդ աշխա-
տանքով: Իսկ յեթե վորոնք աշխատանք նշանակ-
ված է այդ ցուցակներում, բայց վեց ամսից ա-
վելի յե տեսում, այդ գեպքում այդ աշխատանքով
զբաղված բանվորների վերաբերմանը պետք է
լիովին կիրարվի Աշխատանքի որենքների որենս-
գիրքը, այլ վհչ սեղոնալին աշխատանքի որենքը:

Այստեղից յերեսում է, վոր այս կամ այն աշ-
խատանքը կարելի յե սեղոնալին համարել միայն
այն ժամանակ, յեթե նա թե տարվա մեջ վեց
ամսից ավելի չի տեսում և թե՝ բացի գրանից,
նշանակված է Աշխատանքի ցուցակներում:

Վերցնենք խորհանտեսալին առանձին աշխա-
տանքները: Որինակ՝ ձիապանների և անամնա-
պանների աշխատանքը: Այդպիսի աշխատանքն՝
իհարկե, սեղոնալին չե, վորովինետե վոչ թե վեց
ամսիս ե տեսում, այլ ամբողջ տարի: Ուստի և նա
Աշխատանքի ցուցակներում նշանակված չե: Իսկ
տավարածությունը սեղոնալին աշխատանք
է, վորովինետե մի ամբողջ տարի չի տեսում, այլ
մի սեղոն: Մի քանի տաք վայրերում տափարա-

ծությունը վեց ամսից ավելի է տևում և այն-
տեղ այդ աշխատանքը մշտական աշխատանք է
համարվում:

ԻՆՉՊԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-
ՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՄԵՋ ՍԵԶՈՆԱՅԻՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

Ծանոթանանք այն սեզոնավին աշխատանքների
ցուցակին, վորոնցում զբաղված են գյուղատնտե-
սական և անտառային բանվորները:

Գյուղատնտեսության մեջ

Խորհրդային առանձին հանրապետություննե-
րում Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատ-
ները հրատարակում են գյուղատնտեսության
սեզոնավին աշխատանքների հատուկ ցուցակներ։
Որինակի համար վերցնենք ՌԱՅԽԽՀ-ի Աշխատղկո-
մատի ցուցակը։ Այնուեղ թվարկված են հետեւալ
սեզոնավին աշխատանքները—մարդագետնային,
բանջարանոցային, ալգեգործական, խաղողագոր-
ծական, պայքար ցանքսերի վասարարների դեմ,
տափարածություն և այլն։

Փայտամբերման յեվ գետարարի աշխատանիները

Այդ աշխատանքների մեջն են մտնում — ածխա-
գործությունը և ձյութահանությունը, խեժի պատ-

րաստությունը բեկինի և կանիֆոլի արհեստա-
նոցներում, անտառանյութերի արտահանումն ան-
տառից և փոխադրումը անտեսական որգանների
ձիերով, փայտի դարսումը, զլորահանումը և փո-
խադրությունը, յեթե դրանք պահեստներումն են
կատարվում։ Գետատար փոխադրությունը նա-
վերի և լաստերի վրա, ինչպես և փայտի գետափ-
նյա զլորահանման և դարսելու աշխատանքները։

Կոճղերի ջոկջկումը, արմատների հանումը
յեվ կեղեվաթելի պատրաստումը

Հողաչափական, հողաչիճարարական ոժան-
դակ ածխատանիները, վոր կատարում են տե-
ղական բանվորները, այլ վոչ տեխնիկական մըշ-
տական աշխատավորները։

Թվարկված աշխատանքներում գործում են սե-
զոնավին աշխատանքի որենքը։ Բացի դրանից,
այս նույն որենքը տարածվում է նաև փայտա-
հատների և գետի հոսանքով փայտ ուղարկող
բանվորների վրա Աւրալի ջրու գավառում՝
Սվերդլովսկի, Պերմսկի, Նիժնե-Տագիլսկի և
Զլատոռուսովսկի գավառներում և Սիբիրի 9
գավառում՝ Անչինսկի, Բիլսկի, Իրկուտսկի,
Կանսկի, Կրասնոյարսկի, Կուզնեցկի, Նովոսի-
բիրսկի, Տարսկի գավառներում և Ուրալսկի

ինքնավար հանրապետության մեջ, ինչպես և Հեռուավոր Արեվելքում:

Այդ շրջաններում սեղոնային աշխատանքային որենքը կիրառվում է փայտահատների և գետի հոսանքով փայտ ուղարկող բանվորների վերաբերմամբ, անկախ այն հանդամանքից, թե քանի ամիս են նրանք զբաղվել այդ աշխատանքով: Մյուս փայրերում այն փայտահատները և գետի հոսանքով փայտ ուղարկող բանվորները, վորոնք անընդհատ աշխատում են ուժ ամսից ավելի, նույնպես սեղոնային աշխատանքի որենքի պաշտպանության տակ են գտնվում¹:

ՎՈՐԾԵՂ ԶԻ ԿԻՐԱՌՎՈՒԹԻՄ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՔԸ

Գյուղացիական այն տնտեսության մեջ, վորը վարձու բատրակ ե պահում, լինի նա ձեռնարկային, կուլակային, միջակային թե չքավորական, սեղոնային աշխատանքի որենքը չի կիրառվում:

Չքավորական և միջակային տնտեսություններում կիրառվում են «ժամանակավոր կանոններ»:

¹ Խորհրդային Միության մյուս վայրերում փայտահատների և գետով փայտ ուղարկող բանվորների աշխատանքը՝ յեթե նրանք 8 ամսից ավելի չեն աշխատում, պաշտպանվում ե առանձին՝ 1927 թվականի նոյեմբերի 2-ի որենքով:

Կուլակային տնտեսություններում վարձու աշխատանքը պաշտպանվում է Աշխատանքի կողեքսով և առանձին վորոշումով որենսգրքի կիրառման կարգի մասին՝ կուլակային տնտեսությունների մեջ: Այդ խոկ վորոշման մեջն ել ասված ե, թե սեղոնային աշխատանքի որենքը չի կիրառվում կուլակային տնտեսությունների մեջ: Գյուղացիական ձեռնարկային տնտեսությունների մեջ Աշխատանքի կողեքով կիրառվում ե ամբողջությամբ:

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՑԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Քիչ ե պատահում մի քանի բանվոր վարձող մասնավոր արտադրություն կամ տնտեսություն, վորի հետ կոլեկտիվ պայմանագիր կնքված չլինի: Խոկ պետական ձեռնարկության մասին խոսք լինել չի կարող: Այդ ցուց ե տալիս, վոր արհմիւթյուններին հաջողվել ե համել այն բանին, վոր բոլոր վարձողները կոլեկտիվ պայմանագիր են կնքում: Այդ պայմանագրերում Միությունը միշտ ավելի իրավունքներ ե պայմանագրում բանվորների համար՝ այն իրավունքների համեմատությամբ, վոր տրված են նրանց աշխատանքային որենքներով:

Սեղոնային աշխատանքների համար ել արհմիւթյան մասին պայմանագրերը կամ պայմանագրերում նշված են աշխատանքային որենքներով:

կարեսը փաստաթուղթ ե: Հաշվեգրքուցկով աշխատավարձը կարելի յե ստանալ առանց դատարանի և առանց քաջբայլի: Յեթե կարիք լինի ապահովագրական դրամարկղում, աշխատանքի բորսայում կամ մի այլ տեղ ապացուցել, թե վորչափ աշխատավարձ ե ստացել, աբանեղ ել հաշվեգրքուցկը կոգնի: Բայցի հաշվեգրքուցկից, ուրիշ փաստաթղթեր պետք չեն վարձու աշխատանքի տևողությունն ապացուցելու համար:

Ահա՝ որինակ, թե ինչպես կարելի յե հաշվեգրքուցկով աշխատավարձն ստանալ: Յեթե վարձողը վորոշված ժամկետին չի վճարում պայմանով հասանելիքը, բանվորն իր հաշվեգրքուցկով պետք ե ներկայանա ժողովրդական դատավորին կամ նոտարին: Նրանք զրավոր կարգադրությունն են տալիս, վորը կոչվում ե կատարողական մակագրություն: Այդ կարգադրությունը նույն ուժն ունի, ինչ վոր կատարողական թերթը, վոր տըրվում ե դատարանի վճռով:

Սակայն, հաշվեգրքուցկով կատարողական մակագրություն կարելի յե ստանալ միայն ժամանակ, յեթե գրքուցկում լրիվ կերպով գրված ե այն, ինչ վոր հասնելու յե բանվորին աշխատանքի համար և բոլոր՝ ինչ վոր ստացել ե նա:

Իսկ յեթե հաշվեգրքուցկը արված ե միայն ձևի համար և բանվորը չի հետևում, վոր գրքուցկը

կանոնավոր լրացվի, այդ նույնն ե թե, գրքուցկ ու նենալով հանդերձ, նա զըքուցկ չունի: Ալդպիսի դեպքում նա պետք ե դիմի դատարան, վկաներ կանչի և ապացուցի պայմանադրության կետերը և թե ինչքան փող ե ստացել:

Յերբ կարելի յե արձակել սեզոնային բանվորին

Աշխատանքի ժամկետի մասին պայմանավորվում են վարձելիս: Բանվորին ժամկետառաջ կամ աշխատանքն ավարտելուց առաջ արձակել կարելի յե միայն ճշտորեն վորոշված դեպքերում: Որենքը թույլ չի տալիս առանց վորեւե պատճառի արձակել բանվորին: Սեղոնային բանվորը կարող ե հեռանալ աշխատանքից, այդ մասին էերեք որ առաջ հայտնելով վարձողին: Իսկ սեզոնային բանվորին վարձողը կարող ե արձակել միայն հետևկալ դեպքերում:

Յերե բոլորովին կամ մասնակիորեն դադարում ե աշխատանքը և նետեսության կամ ձեռնարկությունների մեջ: Պարզ ե, յեթե աշխատանքը պակասում ե, բանվորների թիվն ել պետք ե պակասի: Յերե մեթենաների փչացման կամ նյութեղենի պակասության պատճառով յերկու շաբաթից ավելի ժամանակով դադարեցվում ե աշխատանքը, այդ դեպքումն ել տնտեսությունը կարող ե արձակել բանվորին:

բացրած բանվորական որ ե մտցվում, պատանիների համար ել ավելացվում ե նույնքան ժամ։ Որինակ՝ յեթե հասակավոր բանվորների համար որը յերկարացվում ե մինչև տաս ժամ, հետեւբար, 16-ից 18 տարեկան պատանիների համար ել բանվորական որը դառնում ե ութ ժամ, իսկ 14-ից 16 տարեկան պատանիների համար—վեց ժամ։


Ինչպես ե վարձատրվում սեղոնային բանվորի աշխատանիք

Կոլեկտիվ պայմանագրերում և տարիֆային համաձայնություններում Միությունը պայմանավորվում է վարչության հետ աշխատավարձի չափի, նրա հաշվելու կարգի (որավարձ, ամսավարձ, գործարքային) և վճարման ժամկետների մասին։ Սեղոնային բանվորների աշխատավարձը շատ հաճախ լինում է ժամանակով—աշխատանքի վորոշ ժամանակի համար սահմանվում է վորոշ վարձատրություն։ Որինակ՝ որվա աշխատանքի համար սահմանվում է 1 ոռուբլի, այդ որավարձ ե, ամսվա աշխատանքի համար՝ 30 ոռուբլի. այդ ամսավարձ ե։ Սակայն, կարող ե կիրառել նաև աշխատանքի գործարքային վարձատրություն, յերբ վճարում են ամեն մի հատի կամ վորոշ կը ուշագիր կամ յերկայնության չափի համար։

Որինակ՝ ամեն մի հերկավար հողի մեկ հեկտարից 10 կոպեկ, մեկ խորանարդ մետր կոտորված փայտի համար՝ 60 կոպեկ։

Գործարքային վարձատրության գեպքում աշխատավարձը կախված է աշխատանքի նորմայից, վորը սահմանվում է պայմանագրով կամ ԳԿՀ-ի կողմից։ Որվա կատարվելիք աշխատանքի նորման աշխատանքի այն քանակությունն ե, զոր վարձվող պետք է կատարի ութ ժամվա ընթացքում։ Գործարքային վարձատրությունը սահմանվում է հետևյալ ձևով. վերցնում են բանվորի որավարձը և բաժանում են կատարվելիք աշխատանքի նորմայի վրա։ Որինակ՝ ութ-ժամակա բանվորական որվա համար՝ Սախարովեստի այն բանվորներին, վորոնք զբաղվում են ճակնդեղի փորման աշխատանքներով, համում է 1 ոռուբլի։ Որվա (ութ-ժամակա) կատարվելիք աշխատանքի նորման այդ բանվորների համար 5 հեկտար ե, ուրեմն, գործարքային գինը ամեն մի հեկտարի համար հավասար ե 1 ոռուբլու՝ բաժանած 5 մասի, այսինքն 20 կոպեկ։

Սեղոնային աշխատանքում յերբեմն խմբական վարձատրություն ել են տալիս։ Որինակ՝ մի ամբողջ դաշտի հունձը հավաքելու համար, վոր 5—6 որվա աշխատանք և պահանջում, 20—30 ոռուբլի աշխատավարձ և վորոշվում։ Այդ վարձավճարը,



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ինչպես և գործարքալինը, կախումն ունի կատարվելիք աշխատանքի նորմայից և որավարձից:

Հաճախ սեղոնալին աշխատանքի յեն գալիս բանվորների և բանվորուհիների ամբողջ խմբեր (արտելներ): Այդպիսի արտել վարձելով, վարչությունը պետք է ամեն մեկի հետ առանձին հաշիվ տեսնի:

Աշխատավարձ տալու ժամկետները սահմանվում են կոլեկտիվ պայմանագրով կամ հաշվերքություններով. աշխատավարձը պետք է տրվի ամիսը յերկու անգամից վոչ պակաս:

Սակայն ինչ հաշվով ել վոր լինի և ինչ ձեռվ ել աշխատանքի վարձավճարը հաշվվի, վարչությունը՝ պարտավոր ե միշտ ժամանակին վճարել աշխատավարձը և առանց Միության հետ համաձայնության գալու չերկարել բանվորական ժամանակը: Պատահում են այնպիսի վարիչներ, վորոնք ասում են, թե իրենց գործը չե, թե բանվորներն ինչքան ժամանակ են զբաղվել աշխատանքի գործարքալին կամ խմբական վարձավճարման դեպքում: Սակայն, այդպես դատելը ճիշտ չե: Խորհրդավին որենքներով՝ վարձողը պետք է հետեւի, վոր վարձված բանվորները այն ժամանակից ավելի չաշխատեն, ինչ վոր նախատեսնված և որենքով կամ կոլեկտիվ պայմանագրով:

Ամեն մի վարձող պարտավոր է աշխատանքի պաշտպանության կանոնները կատարել: Յեթե այդ կանոնները չպահպանվեն, բանվորը աշխատանքի ժամանակ կարող է վնասվածք ստանալ և հիվանդանալ: Առանձնապես այդ կարող է պատահել բարդ մեքենաների վրա աշխատելիս: Աշխատանքի պաշտպանության կանոններում խոսվում է կանանց և պատանիների աշխատանքի, արտհագուստ տալու, անվտանգության միջոցառումների և բնակարաններ հատկացնելու մասին:

Կանանց յեվ պատանիների աշխատանքը

Առողջության համար ծանր և վտանգավոր այն աշխատանքներին, վորոնք թվարկված են առանձին ցուցակում, կանայք և պատանիներ չեն ընդունվում, — որինակ՝ գերանակապի և անտառհատության աշխատանքներին: Հղի կանայք գիշերները և ժամանակից ավելի չափով ե աշխատեն:

Արժագուստ

Որենքով նախատեսված է հատուկ հագուստ (արտհագուստ) տալ առանձին աշխատանքներում զբաղված բանվորներին: Որինակ՝ փակա-

մթերումների գործում վարձողը պարտավոր ե
տրեխներ և թենոցներ տալ: Արտհագուստ ե
հասնում նաև գյուղական աշխատանքներում:
որինակ՝ հովիզներին—գլխանոցով վերնազդեստ՝
պլաշչ, մատուցողներին—խալաթ և ակնոցներ:

Ցանքերի և վիասարարների դեմ պալքարելու
աշխատանքում, վորը թունավոր նլութերի կի-
րառման հետ ե կապված, արգում ե հակագազալին
դիմակներ և ուրիշ հարմարություններ՝ բան-
գորների առողջությունը պահպանելու համար:

Արտհագուստը պետք ե հագնել միայն աշխա-
տանքի մեջ: Աշխատանքը վերջացնելուց հետո՝
բանվորներն արտհագուստը պետք ե հանձնեն
վարչության: Կոլեկտիվ պայմանագրով և որեն-
քով արտհագուստի ժամկետ ե սահմանվում:
Արտհագուստը կարկատել և նորոգել ե տալիս
վարչությունն իր հաշվին:

Անվտանգության միջոցներ

Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը կա-
նոններ ե հրատարակել, թե ինչպես պետք ե
վարվել մեքենաների հետ և հսկել նրանց վրա:
Մեքենայի հետ անզգույշ, անփուլթ կամ սխալ
վարվելուց մարդ կարող է զոհ տալ իր կյանքը:

Կանոններում մատնանշված ե, թե վարչու-
թյունը հատուկ մարդիկ պետք ե նշանակի, վո-

րոնց պարտականությունն ե հսկել, վոր մեքե-
նաները բարեկարգ վիճակի մեջ լինեն: Նախքան
բանվորը արակարորի վրա կնստի, կամ աշխա-
տանք կակսի շոգեշարժ կամ մի այլ մեքենայով;
պետք ե ծանոթացնել մեքենայի հետ և ցուց
տալ, թե ինչպես պետք ե վարվել նրա հետ:

Մեքենան բանվորին հանձնելուց առաջ՝ ստու-
գում են, թե արդյոք նա կարողանում է վարվել
նրա հետ, թե վոչ: Յեթե մեքենան շղթայով կամ
ուեմենով կապված է մատուի հետ, այնպես պետք
ե պաշտպանել այն, վոր պատահմամբ նրա մեջը
բանվոր չընկնի: Մեքենաների հետ վարվելու
կարգի մասին՝ կանոններում կան դարձյալ ու-
րիշ շատ կարևոր ցուցմունքներ:

Բնակարաններ

Վոչ միայն սեղոնային աշխատանքներում, այ
և շատ մշտական աշխատանքներում բանվորները
լավ չեն ապահովված բնակարանով: Պատահում
ե, վոր խորհնանտեսության մեջ սեղոնային բան-
վորին տեղավորում են գոմում կամ մարագում
և հաճախ փայտամթերման վրա աշխատող բան-
վորներն ստիպված են գետնավոր հյուղերում
ապրել: Սակայն, յեթե բնակարանների կառու-
ցումը ֆաբրիկաների և գործարանների բանվոր-
ների համար ձգձգվում ե վորոշ շինամթերքների

թանգության և պակասության պատճառով, ապա սեզոնալին բանվորները հաճախ բնակարանացին կարիքից տառապում են միայն վարչության անշնորհքության հետևանքով:

Աշխժողկոմատը և նրա աշխատանքի տեսուչները խստիվ հետեւում են, վոր սեզոնալին բանվորների համար փայտե բարակներ և ուրիշ ժամանակավոր բնակարաններ շինվեն: Աշխժողկոմատի հատուկ վորոշումով ցուցմունքներ ե արրված, թե ինչպիսի շենքեր պիտի շինվեն սեզոնալին բանվորների համար, վոր մաքուր ու հարմար լինեն:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ՔՆՆՎՈՒՄ ՍԵԶՈՆԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ

Գ. Կ Հ

Յեթե վարչությունը որենքը կամ կոլեկտիվ պայմանագրի պայմանները չի կատարում, բանվորը վեճի յե բոնվում նրա հետ: Պետք է արագ և ճիշտ լուծել նման աշխատանքացին վեճը, վորովինետե նրա ձգձգումը ձեռնտու չե թե բանվորին և թե անտեսությանը: Աշխատանքացին վեճերի քննության գլխավոր տեղը ԳԿՀ-ն է (գնահատու կոնֆլիկտային հանձնաժողով): Այդ հանձնաժողովը կազմված է բանկոմի - բանվորական մասի - և վարչության ներկայացուցիչներից: ԳԿՀ-ում բոլոր գործերը վճռվում են միայն

կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Յեթե համաձայնություն չկա, նշանակում ե, թե վեճը լուծված չե:

1929 թվականից նոր կարգ ե մտցված ԳԿՀ-ում գործերը քննելու համար: Նա այն իմաստն ունի, թե վեճերի մեծ մասը պարտադիր կերպով պետք ե քննվեն նախ ԳԿՀ-ում: Միայն այն վեճերը, վորոնք սխալ արձակման (բացի անպետքության և աշխատանքացին պարտականությունները չկատարելու համար արձակումներից) և աշխատավարձն անվճար թողնելուն են վերաբերում, կարող են քննվել՝ կամ ԳԿՀ-ում և կամ դատարանում — ըստ վիճող կողմերի ցանկության:

ԳԿՀ չի կարող վեճերը քննել կուեկախիլ պայմանագրից յեզրակացություններ հանելով, փոփոխելով, լրացնելով և մեկնություններ տալով:

ԳԿՀ-ին դիմելիս բանվորը պարտավոր չե գրավոր հայտարարություն ներկայացնել: Նա կարող է բանագոր կերպով բացարել, թե ինչ ե իր գործը:

Յեթե ԳԿՀ-ը մի բան կվճռի բանվորի ոգտին, վարչությունը պարտավոր է անհապաղ կատարել այդ վճիոը, իսկ հրաժարվելու դեպքում՝ կարելի յե ստիպել նրան յենթարկվել ԳԿՀ-ի փորոշմանը: Դրա համար պետք է ԳԿՀ վճռի պատճենը տանել աշխատանքի տեսչին և ստանալ վկայական, վորը կատարողական թերթի ուժ ունի:

ՅԵՐԵ չի աջողվում համաձայնության գալ
կարչության հետ, պետք ե շտապել գործը հանձ-
նել ԳԿՀ-ին։ Որենքում մատնանշված են կարձա-
տե ժամկետներ ԳԿՀ-ին հայտարարություններ
տալու համար։ Արձակման վերաբերյալ գործի
հայտարարությունը կարելի յէ տալ 14 որից վոչ
ուշ, արտաժամաց վճարի գործերի համար մեկ
ամսից վոչ ուշ, իսկ մյուս գործերի համար 3
ամսից վոչ ուշ։

Այդ ժամկետներից դուրս ԳԿՀ կարող ե քննել
վեճը միայն այն դեպքում, չեթե վորևէ հարգելի
պատճառ (որինակ՝ հիվանդություն, հեղեղ, հըր-
դեհ) խանգարել ե հայտարարությունը ժամա-
նակին տալ։

ԳԿՀ սխալ վճով դեմ կարելի յէ բողոքարկել
աշխատանքի տեսչին 14 որվա ընթացքում։

Ենթաս պետք ե դիմել դատարան

Աշխատանքալին վեճերը կարող են քննվել
նաև դատարանում։ ՅԵՐԵ ԳԿՀ-ում գործը չի
վճռվել, կարելի յէ դիմում տալ դատարանին։
ԳԿՀ-ի սխալ վճիռը փոխելուց հետո յել նույն-
պես կարելի յէ դիմել դատարան։ Բացի դրանից,
դատարան կարելի յէ դիմել նաև այնպիսի գոր-
ծերով, վորոնք պարտադիր չե, վոր անպայման
վճռվեն ԳԿՀ-ում, —որինակ՝ կրճատման հետևան-

քով արձակումը կամ աշխատավարձի անվճար
թողնելը։

Դատարանին հայտարարություն տալու ժամ-
կետները նույնն են, ինչ վոր ԳԿՀ-ում։ Դատարա-
նին գրավոր դիմում տալն ել պարտադիր չե։
կարելի յէ բանավոր կերպով գանգատվել և դա-
տարանը պարտավոր ե քննել գործը և որինական
գիռ տալ։

Սեզոնային բանվորի պատճանությունը Միու-
րյան կողմից

Ա. թ հ մ ի ու թ յ ու ն ը սեզոնային բանվորներին
կազմակերպում ե մի համերաշխ բանվորական
ընտանիքում։ Արհմիության ողնությամբ սեզո-
նային բանվորը հեշտությամբ ե պաշտպանում
իր իրավունքները և ձեռք բերում իր կյանքի բա-
րելավումը։ Միայն խորհրդակին իշխանության
ժամանակ միությունները կարողացան զարգաց-
նել իրենց գործունելությունը, վորովհետև խոր-
հրդակին իշխանությունը մեծ իրավունքներ տվեց
միություններին։ Միությունները մամնակցում
են որենքների հրատարակությանը։ Միություն-
ները աշխատանքային և կոլեկտիվ պայմանա-
գրեր են կնքում։ Նրանք իրենց բանվորական կո-
միտեների միջոցով հսկում են այդ պայմանագրերի
և որենքների կատարման վրա։ Միությունն ողնում

Ե իր գործազուրկ անդամներին աշխատանք գտնելու: Միությունն ոգնում է բանվորներին պալքար մղելու մասնավոր-տնտեսատերերի դեմ գործադուլի միջոցով (աշխատանքից հրաժարվելու): Միությունը պալքարում է նրանց դեմ, ովքեր խախտում են որենքները և աշխատանքային կոլեկտիվ պայմանագրերը:

Սեզոնային բանվորը միշտ պաշտպանություն է գտնում Միության մոտ: Ամեն մի բանվոր պետք է պինդ կպչի իր Միությանը: Միության հետ միասին և Միության միջոցով սեզոնային բանվորը մասնակցում է խորհրդական լերկրի տնտեսական շինարարությանը: Պետական ամեն մի ձեռնարկության մեջ, միություններն ստեղծել են արտադրական խորհրդակցություններ և հանձնաժողովներ, վորոնք միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի տնտեսությունն ավելի լավ հիմքերի վրա դրվի: Այդ աշխատանքին մասնակցում են նաև սեզոնային բանվորները: Ամեն մի բանվոր պետք է իրեն հանձված աշխատանքին վերաբերվի այնպես, ինչպես իր հարազատ գործին:

Միությունը պետք է այս ամենը բացատրի բանվորներին և ոգնի՝ նրանց՝ տնտեսությունը բարելավելու:

Բանվորները հետզհետե ընտելանում են տըն-

տեսությունը կառավարելուն, իսկ այդ բանը հսարավորություն է տալիս թե Միությանը և թե հասարակական և խորհրդական մտուս կազմակերպություններին առաջ քաշել նրանց տնտեսական պատասխանատու աշխատանքների մեջ:

*
* *

Այս գրքումկը կարդալով՝ լավ հիշեր, ընկեր, այն՝ ինչ վոր որա մեջ ասված է: Հիշեր, վոր խորհրդական իշխանությունը հոգ ե տանում, վոր հեշտացնի քո աշխատանքը: Դու յել պետք ե աղնիվ և զիտակից աշխատանքով ոգնես խորհրդական պետությանը՝ բանվորագյուղացիական ընդհանուր գործի հաջողության համար: Պատմիր նաև քո ընկերին այն ամենի մասին, ինչ վոր կարդացիր այս գրքումկում և ամեն ինչ մանրամասն բացատրիր նրան: Իսկ յեթե գրքումկում վորեե բան անհասկանալի լե, հարցըրու բանկոմում կամ Միության մի ուրիշ որգանում և կրացատրեն քեզ:

Կարելի յե և գրել մեզ՝ Մոսկվա, և մենք հարցերիդ կպատասխանենք:

ԲՈՎԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Սեղոնալին	աշխատանքի	որենքը	Աշխատանքալին	
կողեքսի	լրացումն	ե		3
ինչպես	կիրառվում	սեղոնալին	աշխատանքի	որեն-
			քը	4
ինչպիսի	աշխատանքներ	են	զյուղատնտեսության	
			և	
			անտառալին	տնտեսության
			մեջ	սեղոնալին
				համարվում
				6
			Գյուղատնտեսության	մեջ
			Փալտամթերման	և
			գետատարի	աշխատանք-
			ները	6
			Կոճղերի	ջոկջկումը,
			արմատների	հանումը
			կեղեաթելի	պատրաստումը
			Վորտեղ	չի
			կիրառվում	սեղոնալին
			որենքի	աշխատանքի
			որենքը	8
Սեղոնալին	աշխատանքները	և	կոլեկտիվ	պայմա-
				նագիրը
Սեղոնային	բանվորի	աշխատանքային	իրավունք-	9
			ները	10
			Հաշվեգրքույկ	10
			Ցերբ կարելիե	արձակել սեղոնալին բանվորին
			Որական	քանի ժամ պետք ե աշխատի սեղոնա-
			լին բանվորը	15
			ինչպիս վարձատրվում սեղոնալին բանվորի	
			աշխատանքը	16

Աշխատանքի պաշտպանությունը	19
Կանանց և պատանիների աշխատանքը . .	19
Արտհագուստ	19
Անվտանգության միջոցներ	20
Բնակարաններ	21
Վորտեղ են քննվում սեզոնալին բանվորների աշ-	
խատանքալին վեճերը	22
Գկչ	22
Ինչպես պետք ե դիմել դատարան . .	24
Սեզոնալին բանվորի պաշտպանությունը Մի-	
ության կողմէց	25



ՀՀ Ազգային գրադարան



NL0197363

768

Գիրք 8 կոպ. (1 մ.) մաս.



Д. Швейцер

ТРУДОВЫЕ ПРАВА СЕЗОННИКА

Госиздат ССР Армении
Эривань, 1930 г.
